

ԼԵՈՒՆ ԱՐՔԵՏԻՊԸ ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ
Հակոբյան Ա. Գ.

Ընտրված թեման արդիական է, քանի որ այսօր, առավել քան երբևէ, գրականագիտությունը հենվում է մի կողմից՝ հարակից գիտությունների՝ հոգեբանության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի և այլնի ձեռքբերումների վրա, մյուս կողմից էլ ներկայանում են գրականագիտական մոտեցումներ, որոնք թույլ են տալիս նոր կողմերից դիտել գրական իրողությունները: Լեռան արքետիպը, լինելով բնության առավել մնայուն ու վեհատեսիլ դրսևորումներից, բանահյուսության ու գրականության մեջ ստեղծել է կրկնվող կերպարներ, սյուժեներ ու մոտիվներ և ընկալվում է իբրև համընդգրկող, վերածնվող մտածական մոդել, որը թեպետև շարունակ ենթակա է արտաքին փոփոխությունների, սակայն իր մեջ ունի կայուն իմաստային-արժեքական կարևոր միջուկ: Լեռան պատկերը կայուն ներկայություն ունի հայկական մշակույթում, հետևաբար և առաջին հերթին նրա բանահյուսության մեջ:

Բանալի բառեր. հայոց լեռներ, արքետիպային մոտիվ, բանահյուսություն, հոգևոր կյանք, խտացումներ, համակարգ, ազգային բնավորություն, Մուշ, Սասուն:

Նախաբան: Գեղարվեստական արքետիպը /նախաձև/, լինելով բանահյուսության ու գրականության մեջ կրկնվող կերպարներ, սյուժեներ ու մոտիվներ, ընկալվում է իբրև վերածնվող մտածական մոդել, որը թեպետև շարունակ ենթակա է արտաքին փոփոխությունների, սակայն իր մեջ ունի կայուն և հարուստ իմաստային հիմք, որ, ժողովրդական կյանքի արձագանքներին համապատասխան, հարստանում է համապատասխան իմաստային շերտերով: Արքետիպն ունի բազմադիմի արտահայտություններ, սակայն մեզ հետաքրքրում է լեռան արքետիպային մոտիվն իբրև իշխող

իրողություն առաջին հերթին հայկական բանահյուսական գրառումներում: Ուղղորդվել ենք հիմնականում ԵՊՀ 2016թ. հրատարակած «Գրականության տեսության արդի խնդիրներ» արժեքավոր ուսումնական ձեռնարկով, Գ. Սրվանձոյանցի երկերի երկհատորյակով, Ա. Ղանալանյանի «Ավանդապատում», Ս. Հարությունյանի «Հայ հին վիպաշխարհը», Մ. Աբեղյանի, Ա. Դոլուխանյանի ուսումնասիրություններով՝ աշխատելով ընդհանրական վերլուծության սահմաններում: Մեր աշխատանքում օգտագործել ենք ինչպես ընդհանուր-համադրական, այնպես էլ էթնիկական հոգեբանության գուգադրական-համեմատական մեթոդները:

...Ի սկզբանե հայ գրականությունը եղել է գոյապայքարի գրականություն, որտեղ իբրև բնական պաշտպանական տարածք ու սրբություն դիտվել է լեռը: Ահա թե ինչու նրա արքետիպային պատկերը դառնում է մշտամնա խորհրդանիշ ոչ միայն բանահյուսության, այլ նաև հայ նոր և նորագույն գրականություններում:

Ժամանակակից նշանավոր հոգեբան Ալբերտ Նալչաջյանը նկատել է. «Ազգի հոգեկան կյանքի դրսևորումներից շատերը, ընդունակություններն ու հմտությունները ամրապնդվում ու մնում են նրա մշակույթի՝ պատմության, բանահյուսության, գրականության, ճարտարապետական հուշարձանների մեջ, կենցաղում, կայունացած միջանձնային և միջխմբային փոխհարաբերություններում, զանազան ավանդույթներում, տոնական, կրոնական և այլ արարողություններում, սովորույթներում ...Վերջապես, ազգային մշակույթի մեջ զգալի տեղ են գրավում բազմաթիվ **խորհրդանշանները**» (ընդգծումները հեղինակինն են) [5], [167]: Ապա, շարունակելով իր խոսքը, հոգեբանը բնորոշում է սիմվոլը՝ իբրև ազգային հոգեկանի, հատկապես բնավորության, **ծածկագրման/ կողավորման/ համակարգ** [5], [171]: Հիրավի, դրանք յուրատեսակ խտացումներ են, որոնք հասկանալի են հաճախ նաև օտարին: Իսկ ազգի զարգացման որոշակի փուլում դրանք նաև համակարգի են վերածվում: Ի սկզբանե ազգային նվիրական սիմվոլի դեր են կատարել հայոց լեռները՝ իբրև տեղանքի ամենաբնորոշ արտահայտություն, քրիստոնեության շրջանում՝ իբրև հայկական մշակույթի ինքնատիպ ձևերի՝ վանքերի, խաչքարերի ու մատուռների հանգրվան, հոգեկան բազմապիսի ապրումների արտահայտման միջոց: Թող որ դրանք մնային գերված ու օտարված, միևնույնն է, հին սիմվոլը իմաստավորվում, լրացվում էր հուզական նոր շերտերով, նոր

բովանդակությամբ, դառնում հոգեբանական խտացում: Կ. Ջարյանն առանձնահատուկ իմաստ էր վերապահում հայրենական բնաշխարհին՝ գրելով. «Ամեն մարդ փնտրում է արտաքին առարկաների մեջ իր ներքին տեսիլքների համարժեքը» [2], [94]: Մեզ հետաքրքրող հարցի շուրջ նա կատարում է ուշագրավ դիտարկումներ «Անցորդը և իր ճամբան» համայնավեպում: Ըստ Կոստան Ջարյանի՝ լեռը մենակություն է ու մեկուսացում [ն.տ.]: Ահա թե ինչու մեր «նավը միշտ մնում է լեռան վրա» և ոչ թե վերջապես հայտնվում իր տեղում՝ ծովի ազատ հորիզոնների դիմաց: Սակայն մյուս կողմից էլ գրողը խիստ մտահոգ է հայկական գործոնի նվազման համար. «Երբ հայը լքում է լեռները, նսեմանում է, փոքրանում, բարոյալքվում: Թող թվով լինենք քիչ, այդ կարևորություն չունի, բայց լինենք ամբողջովին այն, ինչ իսկապես ենք»... [2], [269]:

Լեռան արքետիպային մոդելի իմաստավորման ու բազմապիսի դրսևորումների ասպարեզում առանձնանում է հայ բանագիտության ճանաչված ռահվիրան՝ Գարեգին Սրվանձոյանցը (1840-1892), որի անվան հետ է կապվում ազգային մեծ վիպերգի առաջին գրառումը: Իբրև քարոզիչ և նվիրակ՝ շրջելով հայոց գրեթե բոլոր բնակավայրերում՝ 70-80-ական թթ. նա ակտիվորեն արձագանքեց հասարակական նոր տրամադրություններին, ոչ միայն հավաքեց, այլև բնութագրեց բանահյուսական նմուշները դառնալով նաև առաջիններից մեկը և ճանապարհ բաց անելով բազմաթիվ հետևորդների համար: Ընթացիկ գրեց. «Մեր գրականության մեջ ոչ ոք Սրվանձոյանցի չափ չէ ուսումնասիրել և չէ հավաքել մեր ժողովրդական ավանդությունները, սովորությունները, մեր նախապաշարմունքները...» [7], [24]: Մի հանճարեղ ներքնատեսությամբ նա կռահել է իր գրառած գործերի արժեքը և բացի իրեն տրված որոշակի առաքելությունից՝ հայաբնակ վայրերի վիճակագրություն և հոգևոր քարոզչություն, նա հրնթացս երևան է բերել իսկական բանաստեղծական շնորհք ու երևակայություն՝ ըստ արժանվույն ներկայացնելով տվյալ վայրի ժողովրդական ընկալումը: Ամեննին չթերագնահատելով Սրվանձոյանցի հետնորդների անուրանալի վաստակը՝ մենք հատուկ տեղ ենք տալիս Գարեգին քահանային՝ որպես առաջնեկի և կանխատեսողի: Վանա Արծվիկը՝ Գարեգին Սրվանձոյանցը, հստակ գիտակցել է իր դերը և հայրենի հիշատակների եզակի արժեքը մեր ժողովրդի՝ իբրև հայի գոյատևման գործում: Նա գրում է. «Նախնյաց հիշատակներ այնչափ մեծ արդյունք ունին, որ ազգություն այնու հաստատ կը մնա, որ ազգաց մեռելություն այնու կը կենդանանա, Նահատակաց հոգին այնու կը գորանան, և

հայրենյաց վերանորոգություն այն տեղեն կը հառաջանա: Ասոր համար շատ բարբարոս խորամանկ բռնավորներ երբոր ազգ մի բնաջինջ առնել կամ ազգություն ուրանալ տալ ուզեին, նախ այն ազգի մեջ եղյալ գիրքերը կայրեին, կարդացողներ կսպանեին, նախնյաց շիրիմներ կը քանդեին, և այն ազգի Դյուցազանց, Նահապետաց, Թագավորաց և Քաջաց պատվական ոսկորները փշրեին կամ կը վառեին... որով և ազգի մեջեն իսպառ կանհետանար այն հայրենասիրական կամ ազգասիրական սրբազան զգացմունքն ու հոգին, և ապա կսկսեին խեղճ ժողովուրդը գերել, տանել կամ դարձուցանել իրենց ազգութենեն» [8], [25]: Հայոց լեռների արքեպիսկոպոսի մոտիվները ներկայանում են իրենց վեհությամբ, եզակի գեղեցկությամբ, իր հայրենակցին զորավիզ լինելու պատրաստակամությամբ: «Այն ամեհի բարձրաբերձ լեռները մեծություն մը կ'ազդեին անոնց սրտին. անտառներով, մացառներով զարդարված սարերու գագաթներ և ծոցերը, նույնպես և շամբերը, որոց մեջ լեցուն գազաններ են, զիրենք կ'ստիպեին զենքի վարժվիլ թե՛ որսալու համար և թե՛ պաշտպանվելու համար: Այս ընդարձակ դաշտը և այն մեծատարած երկինքը վեհություն ու վսեմություն կ'ազդեին անոնց հոգվույն, և այն պատվական կլիման արդեն զորավոր և հաղթանդամ կը կազմեր անոնց իրանները» [7], [32]: Ստեղծվում է արևմտահայ բնապատկերի մի հրաշալի համայնապատկեր՝ իր Նեմրութ, Սիփան, Բինգյոլ, Ծովասար, Վարազա ու Ծաղկանց, Քարքե ու Գրգուռ գագաթներով: Որքան սեր, հիացում կա այս տողերում, և բարեխիղճ մանկավարժը որքան տեսանելի կարող է դարձնել Բաֆֆի գրողին: «Մշո դաշտի արևելյան հյուսիսը կա մեկ լեռ Նեմրութ անուն, որո մեկ երեսը կը նայի Պուլանըխա և Մանազկերտու կողմը. Մեկ երեսը Խլաթն է առ ափն Վանա ծովուն, և մյուս երեսը Մշո դաշտն է. յուր թևի տակն ունի նաև մեկ փոքրիկ և իրմեն բաժան լեռ մը տանձաձև, սև և լերկ. այս փոքր լեռն է Գրգուռ, որու ներքևն է Ջրհոր գեղը... Դատվան գեղեն Ջրհորի սահմաններով դեպի Նեմրութ դաշտակողմն գնալով՝ կը տեսնես կարգ մը տնկվածի կամ կանգնվածի պես սև քարեր, որոնք հեռվեն կամ մութ ժամանակ կրնան խաբել զմարդ՝ թե կարավան են անոնք կամ մարդ և ուղտ: Տեղացիք *Բելի ուղտեր և ուղտապաններ* կանվանեն զանոնք և որոնց համար կը վիպասանեն...» [7], [50]: Էջեր անց գրելու է. «Մեր ետևը բարձրագլուխ և անտարբեր կեցած էին Գրգուռ ու Նեմրութ լեռները, երես դեպ հարևելս, կազմ, անթարթ, թագավորի մը թիկնապահներու նման, աչերնին հառած Վարազա լեռան. և ահա հովն հանդարտորեն շարժեցավ, ոսկեղեն շողեր տեսնվեցան այլաց շղարշատես ծալքերեն,

առագաստի հարսի մը պէս ի հանդերձս ոսկեհուռ զարդարյալ և պաճուճյալ. երևեցան օգոստոսի արեգական ճառագայթները, հրեղեն վրանը դեղին լուսով ներկյալ արկավ Վարագեն մինչև Մոկաց լեռները, որո ներքև կը մնային Վանը, Հայոց ձորը, Ռշտունիք և երևոյթն ամբողջ ծովուն, իբրև հատակ փոված վրանին, կապույտով և դեղինով, ոսկեթել գործած. Կակո՛ղ գորգ, որուն վրա դրավ լույսն իր ոտները. - բարձրացա՛վ արեգակն» [7], [372]:

Գարեգին սրբազանը սիրելի վայրերից ամեն մեկի համար գտնում է իր ներկայանալու համապատասխան գուներանգը, չի մոռանում հիշատակել նաև հյուսված երգերը. «Ե՛լ, քիչ մը հառաջ երթանք. Ահա Միփանա սարը, այդ ահագին, բարձր, մասիսակերպ սարը, զոր և Թոմաս Արծրունին Մասիք կանվանե և գերմանացի Վակները՝ Գոռոզ լեռ: Բնակիչները մեկ բան կ'երգեն այս լեռան վրա իբրև հին երգ և կըսեն. «Նոյա տապանն եկավ ի Միփան, /Ասաց./ Միփան, ա՛ն զիս, ա՛ն զիս:/Միփանն ասաց. /Գնա՛ ի Մասիս,/ Գնա՛ ի Մասիս,/ Որ մեծ է, քան զիս, որ բարձր է քան զիս» [7], [53]:

Միփանը համարվել է տեղացիների «Ողիմպոսն ու Պառնասը՝ մուսայից ու քաջաց շնորհատու: Պատահական չէ, որ Միփանը բավական մեծ անդրադարձ ունի ուղեգրություններում որպես սիրո և մահվան հանդիպման վայր, Միփանա գանգը մշտաձյուն, որն իր ոտները պարզել է «Արճիշո, Մանազկերտի և Պուլանըխա սահմանները»: Բինգյոլի համար նույնպես Սրվանձտյանցը գտնում է նրան հատուկ գույներն ու բնորոշումները՝ «բարձր ու աննման», որի գագաթին կվայելես անապակ օղ, և շուրջանակի երևում է ողջ Հայաստանը, Մասիսներն ու Արագածը, Արմավիրի ու Դվինի ավերակները: Կրկին Սրվանձտյանցը դիմում է համայնապատկերային արքետիպի հնարքին, ինչպես նախորդ դեպքերում:

Լեռը նաև արդարության պահապանն է, խստասիրտ հովանավորը, ահա թե ինչպիսի նկարագրով է ներկայանում Միփանը «Սարե Միփանե» ժողովրդական վիպերգում [7], [55]: Երբ քաղցը նեղել է Միփանին ապավինած սիրահար գույզին, «սև տղան» եղնիկ է սպանել, և ինքն էլ գահավիժել լեռն ի վար...Բանազետ քահանան եզրակացնում է. «Ընդհանրապես քիչ են քրդերե ու տաճիկներե աշուղները Հայաստանի մեջ. այդ երկիր և այդ կլիման հայուն է թողուցեր այդ միակ ձիրքը, որ անկողոպտելի է մնացեր. այդ երկիրը կ'ըսեմ, որ Քյուրդիստան չէ, ինչպես կ'անվանեն ոմանք, այլ տակավին մինչև այսօր և մինչև հավիտյան Հայաստան է ու Հայաստան պիտի մնա» [7], [67]:

Ժողովրդական վիպերգից ծանոթ Ծովասարը ներկայանում է իբրև քույրը Սև սարի ու Մարաթու լեռան, ինչպես նաև Սասնո լեռան, որ եղբայրներից ամենագորեղն է և անպարտելին, և որի հիշատակները ձգվում են Քրիստոսից հազարավոր տարիներ առաջ: Լեռների նկարագրությունից անբաժան են բերդերը՝ Սասնո աշխարհին պահապան, որ մատնացույց են անում իրենց քաջարի բնիկների կենցաղավարությունը: Այսպիսով՝ հերթական անգամ Սրվանձտյանցը գտնում է լեռան արքետիպային ևս մի կարևոր հատկանիշ՝ դրանց պաշտպանական առաքելությունը: Սակայն լեռան պատկերագրության մեջ իր ծավալով ու գեղարվեստականությամբ, այնուամենայնիվ, առանձնանում է հայրենի սրբազան Վարագան: Սա բազմաձև մի առասպել է, աշխարհագրագման դարավոր պատումների շարք, որը դյուրում-տանում է մի հեքիաթային եզերք. «Վարագա լեռը, որո գագաթին վրա ելլողը կը տեսնա եղեր, թե ի՛նչպես արևը վերջնալույսին կը մտնե ծովը, կը լողանա, մաքրվելու և հանգչելու ըրած ուղևորութենեն: Թե՛ այն ժամուն հարևուտս երևցած շառագույն, մոխրագույն և ձյունագույն ծալ ծալ ամպերը արևուն անկողնո քողը և վարագույրներն են: Թե՛ անոր անկողինը ծովուն տակը ձգված է փրփուրի վրա: Թե՛ արև թագավորն է, ու լուսինը թագուհին: Թե՛ աշխարհ արարած քնացած ժամանակը՝ լուսինը կ'ելնե շրջելու, որ չտեսնան զինքը. ու բարիքներ կը սփռե արարածոց և ամոթխածոթյան համար երբեմն ամպե քող կը ձգե երեսին: Թե՛ աստղերը՝ լուսնո կույս ընկեր և նաժիշտներն են. հարորաձև աստղերը՝ նշան կու տան , որ ժամանակին վարողն ու ցանողը՝ բազում արդյունք կ'առնու: Հարդգողը նշան է՝ որ ժամանակով ուրիշ արարածոց աստված յուր մշակները դրկեր մեր երկրի աստուծո կալեն հարդերը գողցեր, ու մեր աստծու հրեշտակները նետ աղեղով զարկեր սպաններ են գողերը, հարդը թափեր երկնից երեսն ու մնացեր: Կշեռք աստղերը՝ նշան են, որ Աստված ամեն աշխատավորին յուր վարձքը կը կշռե կ'ուտա: Յուլացող ասուպները նշան են, որ այնքան մարդ մեռան. վասնզի ամեն ծնած ու ողջ մարդոց մեկ մեկ աստղ կա երկինքը, և մեռած վայրկենին կը սուզանի աստղը» [7], [76]: Որքան մեծ է եղել համաժողովրդական սերն ու պաշտամունքը այս վայրերի հանդեպ՝ ցույց են տալիս նրանց մասին հյուսվածքների առատությունն ու մանրամասները՝ արշալույսը Վարագա սարից, ողջ բնության զարթոնքը. «...ահագին լերան մը տակեն կ'ելլեն նախ 12 դավազներ, սև սև արաբներ. և այդ լերան վրա լուսեղեն ճպոթներով ճառագայթի պես կը զարնեն. լեռը կը ցածնա. ամեն սարերը իրենց գլուխը կը խոնարհեն.

արևը յուր երեսը լվացած ժամանակ ջուրի ցողերով կը սրսկվին սարերը և դաշտերը. հավքերը ամենքը վեր կը թռնին այս ջրի սրսկումեն, կ'արթնան, կճլվլան... Այս լեռը՝ բոլոր վանեցվոց ինչպէս զբոսանաց, նույնպէս և բանաստեղծական երգասացության առարկան և նյութն է: ...Ունի ազդեցիկ և հրապուրիչ բնություն վայելչական, որո քարերն անգամ ձայն և բարբառ ունին» [7], [76-77]: Լեռան՝ իբրև սահմանափակ տարածքի, մենակության ու ազգային հարատևող ճակատագրի յուրատեսակ թարգման է Փոքր Մհերի ասքը, որը ևս բանագետի ուշադրության կենտրոնում է: «Այգեստանյայց հյուսիսակողմը փոքրիկ լեռնագոտի մը կա, որո արևելյան գլուխը կըսվի **Զըմփզըմփ –մաղարա**. Արևմտյան ծայրը՝ Ագրփի և մեջտեղը **Մհերի դուռը**: ... **Մհերի դուռը** ամենալերջ քարն է, զոր տաշեր և կոկեր են մեծ դրան ձևով և վրան բնեռագիրեր գրած են, խիստ հստակ: Բնեռագիրերը նկատողության արժանի են, որ Հայաստանի ամեն նահանգներեն ավելի հաճախ՝ Վասպուրականի մեջ և անոր մոտակաները կը գտնվին» [7], [87]...: «**Մհերի** դրան վերեն սև ջուր մը կաթ կաթ կը ծորի : Եվ կ'ըսեն. «Մհերն և յուր ձին Աստուծո հրամանով փակվեր են այն տեղը:...Այդ դռնով ներսը **Ճախրի ֆալակ** կը դառնա, այսինքն աշխարհի մարդկանց կամ երկրագնդին ճախրը, անիվը, Մհեր շարունակ անոր վրա կը նայի. Երբ այդ ճախրը դադարի, այն օր Մհեր կազատի, դուրս կ'ելլէ ու աշխարհը կ'ավրէ» [7], [88]: Ավելի ծավալուն շարադրանքը տեսնում ենք «Մասունցի Դավիթ կամ Մհերի Դուռ» վիպերգի էջերում: Հեղինակի դիտանկյունը դարձյալ շրջապատի ամենաբարձր գագաթն է ու նրա շուրջբոլոր սփռված հրաշալիքները, որոնց հանդեպ նա անկարող է զսպել իր զմայլանքը: Վարագա հարավում՝ Արարոց լեռը՝ «ջրավետ ու դալարագեղ» դժվարագնաց Հոգվոց վանքով, որտեղ, ըստ Բաֆֆու վեպի, մեկ տարի անց է կացրել իր Սամվելը՝ հոր հետ հանդիպելուց առաջ:

Մշո դաշտում Տավրոսի բարձր շղթան է՝ անտառոտ և երկաթի, կապարի և այլ հանքերով լի. «Ազգային զգացումը երբեմն վառ բոցի պէս, երբեմն մարած մոխրի պէս: Ահ, ո՞ր ազգի հայրենիքը այսչափ անմահ և պանծալի հիշատակները դեռ կենդանի ունի: Մշո դաշտի մեկ կողմը Մասնա քաջաբեր լեռներն են. մեկ կողմը Բզնունյաց ծովը ծիծաղախիտ կը ծածանի, և Ծովասար ճակատը Մշո վերնն է. թոչնոց երամը կասես բնության տաճարին մեջ Արարչին փառաբանիչ կարգված են՝ հրեշտակաց տեղ» [8], [140]: Մասունը բարձր լեռնային մի երկիր էր՝ սար ու ձորերով, կապաններով հարուստ, որի մասին թշնամուն վերագրում են հետևյալ խոսքը. «Ես գիտցա, թե Մասուն դաշտ ու դուրան էր./

Չգիտցա, թե քար ու կապան էր: /Մենք կարող չենք մտնել Սասուն./ Սասուն քար է ու կապան» [1], [333]: Այս լեռնային երկրից առանձնանում է Սև սարը/ Սիմ լեռը. ««այն է՝ Տորոսը, որ Մշո սար ալ կըսվի. զանազան գլուխների բաժանված, բայց իբրև մեկ տան մեջ մեկ գերդաստանի անդամք՝ իրարու մոտ ծունկ ծնկի, դեմ դեմի պուպուզած, ձորերով, վտակներով, գեղերով լի» [1], [333]: Սասնա լեռներից հաճախ են հիշատակվել Ծովասարը և Մեծ Մհերի կառուցած վանքը՝ որպես հայ ժողովրդական վիպերգի հիմնական աշխարհագրական տարածք:

Սև սարի մեջ էր Մարաթուկ լեռը՝ «սուրբ և բարեպաշտ», որը համարվել է ողջ ժողովրդի համար ամենահավաստի երդումնատեղին՝ «Հընր՝ Մարաթուկ վկա. Հընր՝ սուրբ Մարաթուկ գինա» [1], [333]: ...Սասնո վրա հարձակվող թշնամիների նպատակակետն է գլխավորապես Մարաթուկը: Նրանք աշխատում են ավերել վանքը, և Դավթի հոր մահից հետո հենց ավերում են: Բայց Դավիթը նորոգում է «խանգրած» վանքը և բազմաթիվ միաբանություններ հաստատում միջին: Այս վանքն այնքան հարգանք ունի, որ նույնիսկ Կոզբաղինը, որ նույն վանքը քանդել էր, երբ Դավիթը հասնում բռնում է նրան, ասում է. «Ես քու ժամու բախտ, ինձի չսպանես»: Եվ Դավիթը չի սպանում նրան» [1], [334]:

Եզրահանգում: Այսպիսով՝ լեռան արքետիպը բանահավաքների գրառումներում բարձրագույն վեհություն, հինավուրց ավանդությունների շտեմարաններ, ազգային հոգեկերտվածքի ու հիշատակների հավատարիմ պահապաններ են և ներկայանում են գերազանցապես զգացմունքային, գեղարվեստական պլանով: Եթե Գ. Սրվանձտյանցի աշխատանքը հիմնականում մնում էր ուղեգրական ու տեղագրական սահմաններում, ապա Մ. Աբեղյանի, Ա. Ղանալանյանի և նրանց հետնորդների պատումներում լեռան արքետիպը տեղակայվում է ավանդապատումի, ավանդության շրջանակներում: Ավանդություններում մարդու աշխարհաճանաչողությունն ունի «ավելի գիտակցական ու իրականության մոտ բնույթ, և առաջնայինը ոչ թե աստվածներն են, այլ իրենք՝ մարդիկ՝ բնության և հասարակական կյանքի հակոտնյա ուժերի դեմ մղած իրենց պայքարով, աշխատանքային գործունեությամբ և պատմական ճակատագրով» [4], [ԺԵ]: Լեռան արքետիպն այժմ հարստանում է արդիական բովանդակությամբ՝ միջուկում պահելով իր հիմնական կորիզը: Հետաքրքիր մի օրինաչափությամբ՝ հասարակ ժողովուրդը սիրել է հենց այն գեղարվեստական երկերը, որոնցում իրենց պատվավոր արտահայտությունն են ունեցել ժողովրդական

ավանդությունները (Խորենացի, Ալիշան, Ծերենց, Բաֆֆի, Դաշտենց, Գալշոյան...): Նման արքետիպերից են Մասիս սարը, Արագածը, Մարութան: Մասիսին վերաբերող ավանդություններում իշխում է դրամատիզմը, մեր ժողովրդի ապրած մեծ ողբերգությունը՝ ծննդավայրը՝ տարբեր հայրենիքից, պաշտելի ու նվիրական սարը՝ թշնամու տարածքում: Ավելի քան այլուր՝ հայ ժողովուրդը քաջ գիտակցել ու գիտակցում է այս ողբերգությունը, արտահայտում ինքն իրեն, իր պատմական ձգտումներն ու ինքնատիպ բնավորությունը՝ տարբերվելով այլ երջանիկ ժողովուրդներից... Ահա թե ինչու ավանդությունները դառնում են ժողովրդական բանահյուսության ամենաերկարակյաց ժանրերից՝ օժտվելով կայուն արքետիպային հատկանիշներով, ինչպես Մասիսը՝ Հովհաննես Շիրազի պոեզիայում: «Ավանդությունների մի զգալի մասը, գալով խորը հնությունից, շարունակ վերանորոգվում, վերաստեղծվում է՝ հարմարվելով նոր ժամանակների պահանջներին ու խնդիրներին, նոր սերունդների կյանքին, կենցաղին, բարքերին ու հասկացողություններին» [4], [ԼԲ]: Մասիսի արքետիպը շարունակում է մնալ գերիշխող, քանի որ իրականության մեջ պահպանվում է նրա գերեվարված լինելու հանգամանքը, ավելին, պատմաքաղաքական վերջին իրադարձություններն էլ՝ ավելի են սրում կորստյան ցավն ու ազգային արժանապատվությանը հասցված հարատև նվաստացումի զգացողությունը:

АРХЕТИП ГОРЫ В ФОЛЬКЛОРНЫХ ЗАПИСЯХ

Акопян А. Г.

Тема статьи актуальна, так как сегодня литературоведение, как никогда ранее, опирается на смежные науки: психологию, философию, социологию и т.д. В течение времени появляются все новые подходы к анализу литературного текста, которые позволяют с новой стороны рассматривать изучаемую проблему. В центре нашего внимания - архетип горы в фольклорных записях исследователей и их дальнейшие отголоски в художественной литературе. Данный архетип, являясь наиболее устойчивой и величественной формой армянской природы, создал множество образов, сюжетов и мотивов, которые, будучи внешне меняющимися, имеют важную устойчивую идейно-оценочную

сердцевину. Образ горы имеет устойчивое присутствие в армянской культуре и, в первую очередь, в фольклоре.

Ключевые слова: армянские горы, архетипный мотив, фольклор, духовность, насыщенность, система, национальная жизнь, Муш, Сасун.

THE ARCHETYPE OF MOUNTAINS IN FOLKLORE SOURCES

Hakobyan A. G.

The subject matter of the study is topical for some reasons. On one hand, literary studies are based on the achievements of such disciplines as psychology, philosophy, sociology, and on the other hand we have suggested new approaches that give us the chance to consider the matter in a new way. The archetype of mountains has created new personages, plots and motives in folklore and literary environments and is perceived as a complete and reviving cognitive model which, though is subject to external changes, has stable semantic core. The picture of a mountain has a firm place in the Armenian culture and at first in the field of folklore.

Keywords: Armenian mountains, archetypal motives, folklore, spiritual life, system, national character, Moush, Sasun.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ. Երկեր: Հատոր Ա: Երևան: Հայկական ՍՍՀ, ԳԱ հր.: 1966: 571 էջ:
2. Զարեան Կ. Անցորդը եւ իր ճամբան: Երևան: «Սարգիս Խաչենց» հր.: 2010: 622 էջ:
3. Թամրազյան Հ. Ժողովրդական ավանդությունների ներքին խորհուրդը: Գրական դիմանկարներ, հոդվածներ: Հ. 2: Երևան, «Նաիրի»: 1998: 418 էջ:
4. Ղանալանյան Ա. Ավանդապատում: Երևան: Հայկական ՍՍՀ, ԳԱ հր.: 1969: 510 էջ:
5. Նալչաջյան Ա. Էթնիկական հոգեբանություն: Երևան: «Զանգակ-97»: 2001: 541 էջ:
6. Սեմիրջյան-Բեքմեզյան Ա. Գրականություն և միջ: Գրականության տեսության արդի խնդիրներ: Ուսումնական ձեռնարկ: Երևան: ԵՊՀ հրատ.: 2016: էջ 96-136:

7. Սրվանձտյանց Գ. Երկեր: Հատոր 1: Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ հր.: 1978: 410 էջ:
8. Սրվանձտյանց Գ. Երկեր: Հատոր 2: Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ հր.: 1982: 562 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին

Հակոբյան Ա. Գ. - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Շիրակի պետական համալսարան

Էլ. փոստ hakobyanahit49@gmail.com

Տրվել է խմբագրություն՝ 19.09.2021

Գրախոսվել է՝ 15.11.2021